ՄԱՐՏ 24 — 1841 ՆՈՒՄԵՐ 31 ՍԵՓԵՐ 13 — 1257

ՅԱՅՏԱՐԱՐԱՐ ԳԻՐ ԼՐՈՅ

ՄԵԾԻ ՏԷՐՈՒԹԵԱՆ ՕՍՄԱՆԵԱՆ

ԳՈՐԾՔ ՆԵՐՔԻՆ

Յեգիպտոսէն եկած արքունի նաւատորմիղը որ Պէշիքթաշի առաջքը կանգնած է, վերափառ Թագաւորը այցելութեան աղագաւ անցեալ մուհարրէմին 27 ին կիրակի օրը այն նաւատորմիղին մէջ Մահմուտիյէ կոչված նաւը գնաց։ Ուր տեղ Եպարքոսը (վէզիրը) և Դենպետը (շէյխիսլամը) նաև նախարարները՝ և ծովային գործակալները բոլորովին պատրաստված դիմաւորեցին։ Եւ Թագաւորական միւս նաւերէն ալ թնդանօթներ նետելով և կեցցէ Աբքայ մեր աղաղակելով ուրախութիւն ցոյց տրվին։

Եւ ծովային խորհրդական (պահրիյէի միւսթէշար) նաֆիլ էֆէնտին և Աղէքսանդրիայէն եկող ֆէրիգ Մուսդաֆայ փաշան, և այլ ծովային գործակալները Ինքնակալին ոտքը համբուրեցին։ Եւ այն նաւատորմիղի մէջ ոքան վերակացու և նաւապետ կայիններ, ամենքն ալ Թագաւորէն պարգև առին։

Պաճառանոթեան գործոց տեսուչին, և արքունի ծովապետին, նաև արտաքին իրաց նուռավարիչին՝ ասոնց սէֆէրի ամսոյն 6 ին երէքշաբթի օրը գոխվէնտան համար գրված արքայական խաղերին օրինակն է։

—

Ամ Եպարքոս. Պաճառականութիւն գործոց տեսուչ (թիճարէթի նազիր) քէթխի փաշան՝ իրեն պաշտօնատարութենէն հանելը հարկ եղաւ. ուստի մեր արքունի ծովապետ Սաիտ փաշան՝ այն պաշտօնին տեղեակ գրանցված ըլլալով՝ անոր տեղը դրվի։

Եւ արդարութեան վճռոց ժողովոյն անդամներէն (մէճլիսի ահքամի ատլիյէին աղաներէն) Դահիր փաշան ալ՝ մեր արքունի նաւերը կարգադրելու կատարեալ տեղեկութիւն ունենալով՝ այն ալ ծովապետ դրվի։

Եւ արտաքին իրաց տեսուչ (խարիճիյէի նազիր) Ռէշիտ փաշան ալ՝ իրեն պաշտօնէն հանելը հարկաւոր եցաւ. ուստի եպարքոսի խորհրդական (միւսթէշար) Ռիֆաթ պէյն ալ՝ միւշիրութեան բարձու աստիճանով անոր տեղը դրվի։ Եւ քէթխի փաշան և Ռէշիտ փաշան ալ՝ իրենց տունը նստին։

Ահա այս որոշումներս՝ այսպէս յարմար և պատշաճ տեսնալուս համար, այս հրամանս մեր բարձրագոյն դռան մէջ կատարես, և եղելութիւնը ամենուն ծանուցանես։ Եւ որովհետև Ռիֆաթ պէյին առաջքի պաշտօնը բացը մնաց, այն պաշտօնէն ալ մէկ յարմար անձ մը ընտրվի, ու ինձ ծանուցվի։

Այս բարձրեալն աստուած՝ մեր ամենն պաշտօնեայներուն յաջողութիւն տայ, ամէն։

Վերոյիշեալ արքայական խաղերին մէջ գրված կերպովը՝ մեծի տէրութեանը նախարարներէն պատերազմական գործոց վերակացու (հարպիյէի նազիր) մեծարու Արիֆ պէյ էֆէնտին՝ տէրութեանը գործքերուն հմուտ և խոհեմ ըլլալուն համար, եպարքոսի խորհրդական ընտրվեցաւ։

Եւ եպարքոսին մէքթիւպճիներէն Զիւհտի պէյ էֆէնտիին ցոյց տրված հաւատարմութեանը պատճառաւ՝ առաջին րութպէյին երկրորդ սընըֆին աստիճանով հարպիյէի նազիրութիւնը յանձնվելը պատշաճ համարվեցաւ։

Արդարութեան վճռոց ժողովոյն անդամներէն Նասիր էֆէնտին ալ՝ յառաջմանէ մէքթիւպճիյութիւն պաշտօնին մէջ գրանցված ըլլալով՝ բաւական տեղեկութիւն ունենալուն համար, ասոր ալ մէքթիւպճի դրվելը յարմար տեսնվեցաւ։

Ուստի վերափառ Աբքայէն հրաման առնվելով՝ սէֆերի ամսոյն 7 ին երեքշաբթի օրը՝ յիշեալ անձանց պաշտօնատարութիւնները իրենց իմացու

լով, մինչև որ վերջը բժշկվինք, անոր տեղը փոխանորդ մը գրանցվելը կը հարկաւորի։

Ուստի յառաջմանէ Այտրն միւշիրի Եղող Եպիսկոպոսը՝ որ այժմ արքայանիստ քաղաքը իւր բնակարանը կը կենայ, սոյն փաշան խոհեմ և գիտնական ըլլալուն համար՝ Արքային հրամանաւը յիշեալ դաւառին փոխանորդ (խայմախամ) դրուեցաւ։

Եւ շնորհակալութեան համար ալ՝ մուհարրէմի ամսոյն 14-ին երկուշաբթի օրը արքունի ապարանքը բերուելով Ինքնակալին դէմը ներկայացաւ, և ապա իւր հրամանատարութեան կողմը գնաց։

Վառճառականութեան խորհրդական (Թիճարէթի միւսթէշար) Էնվերի էֆէնտիին՝ Դամասկոսի համարակալ (Շամի տէֆթէրտար) դրուելուն պատճառաւը, անոր տեղը խորհրդական մը գրանցուելը հարկաւորեցաւ։ Ուստի Ծովային խորհրդական գրանցուող Ադրիպ պէյ էֆէնտին մտացի և ուշիմ անձ մը ըլլալուն և համեստ բարք ունենալուն համար, հրամանաւ Արքային Թիճարէթի միւսթէշար կարգեցաւ։

Եւ Նաֆի էֆէնտին ալ՝ յառաջմանէ կրթեալ զօրացեալ խորհրդական ըլլալով, զօրացեալ կարգադրական գործերուն ծանօթ և տեղեակ գրանցուելուն աղագաւ՝ Ծովային խորհրդական դրուեցաւ։

Եւ սէֆերի ամսոյն ինններորդ օրը՝ յիշեալ պաշտօնատարութիւնները իրենց իմացումն ըլլալէն ետքը, բարեհնամ Թագաւորը զանոնք իւր դէմը բերել տալաւ, որոնք շնորհակալութիւն ցոյց տալերնուն յետոյ ետ դարձան՝ իրենց տեղը գնացին։

Կրթեալ զօրացեալ հանդերձները և ռոճիկները և ուրիշ հարկաւոր ծախքերը ժամանակէ մը 'ի վեր էր՝ որ արքունի եկամուտին (մալէյէին) գանձարանէն կը կառավարուէր։ Բայց այժմ սոյն գանձարանին գործերը շատնալուն համար, այս ծախքին ալ յատուկ կառավար մը դրուիլը պէտք եղաւ։

Ուստի գանձարանի գործերուն հմուտ՝ արդարութեան վճռող ժողովոյն անդամներէն Մաղլում պէյ էֆէնտին՝ հրամանաւ Արքային կառավար կարգեցաւ՝ մասարիֆաթ նազիրի անունով։ և առաջին րութպէյին երկրորդ սընրֆի աստիճանովը՝ թէշրիֆաթի տէֆթէրը խորհրդականներուն կարգը խայտ եղաւ։

Եւ այս պաշտօնը մուհարրէմի ամսոյն չորեքտասան երորդ օրը՝ իրեն իմացումն ըլլալէն յետոյ, այժմեան պահրիյէի և Թիճարէթի միւսթէշարներուն հետը՝ Ինքնակալին հրամանաւը իւր դէմը ներկայացաւ։

Եւ յիշեալ Մաղլում պէյ էֆէնտիին տեղը ֆէսխանէյի նազիր Միւխթար պէյը՝ յիշեալ ժողովոյն անդամ կարգեցաւ։ Եւ ֆէսխանայի նազիրութեան գործն ալ՝ զարպխանայինգործականներէն յարմար մէկի մը կողմանէ պիտի նայվի։

Մալէյէի խաշնան վարիչութեան նախկին մուհասէպէճի գրանցվող Խալիլ էֆէնտին երկար ժամանակ մալէյէի վերաբերեալ գործերու մէջ պարապելուն համար՝ բաւական հմտութիւն ստացեր է։ Ուստի այժմեան վարիչութեան մուհասէպէճի Էմին էֆէնտին՝ Արքայական հրամանաւ մուհասէպէյի ժողովոյն անդամ դրուելով, նախայիշեալ Խալիլ էֆէնտին՝ անոր տեղը վարիչութեան մուհասէպէճի կարգեցաւ։

Մասարիֆաթի մուհասէպէճիյութիւնը՝ սէրկիսի մուհասէպէճի Բաշիր պէյին, և սէրկիսի մուհասէպէճիյութիւնն ալ՝ յիշեալ ժողովոյն անդամներէն Գատրի էֆէնտիին յանձնուեցան։

Ընտաւլի և Բուրմէլիի մէքթիւպճիյութիւններն ալ՝ այժմեան Բուրմէլիի մէքթիւպճի Հիւսէյին էֆէնտիին տրուեցան։ Եւ նոյն ժողովոյն գրագիրներէն Մէհէմմէտ էֆէնտիին լաւ տեղեկութեանը համար՝ երրորդ րութպէյին նշանը շնորհուելով, նոյն ժողովոյն պաշ քեաթիպ դրուեցաւ։

Մասարիֆաթի նախկին մուհասէպէճի Իզզէթ էֆէնտին ալ՝ արդարութեան վճռող ժողովոյն անդամ (մէճլիսի ահքեամի ատլիյէին ազա) կարգեցաւ։

Պաճա իլիի զապդիյէին վերաբերեալ գործերուն հրամանատար Շէրիֆ փաշային գրագիր՝ Մէհէմմէտ սաիտ պէյը, և արքունի եկամուտին (մալէյէին) գանձարանը գրագրութիւն ընող Ալի էֆէնտին, և զէճրիյէի մուհասսիլ Նուրի պէյ էֆէնտիին գրագիր՝ Սէրմէտ էֆէնտին, սոնք գիտնական ըլլալնուն համար, Արքային հրամանաւը՝ Սաիտ պէյին խոճէկեանութիւն, և Ալի էֆէնտիին ալ խոճէկեանութիւն նաև հինգերորդ րութպէյին նշանը, և Սէրմէտ էֆէնտիին, և մաքսաւոր (կէօմրիւկճի) Արիֆ էֆէնտիին ալ խոճէկեանութեան աստիճանին հետ հինգերորդ րութպէյին նշանները շնորհվեցան։

Ռաքունի Ղաղէթախանան տաճկերէն տպագրած Օրագրին բաղդատողը (մուգապէլէճի) արժանայարգ Լուդֆի էֆէնտին ժամանակէ մը 'ի վեր է՝ որ նոյն տեղը հաւատարմութեամբ իւր գործքին կը հետևէր, և միւտերրիսութեան կարգը անցած ըլլալով գրագրութեան ալ կը պարապէր, այս յարդի անձը խոճէ-

կէանութեան կարգը անցնելու յոյս ունենալուն և մանաւանդ արժանաւոր ալ գտնըլված ըլլալուն համար, բարեխնամ Թագաւորին հրամանաւը անոր խօճէկեանութեան աստիճանը շնորհվելով, իւր վրայ գտնըլված միւտէրրիսութեան վկայականը և նըշանը փոխվեցաւ. և սատրազամին մէքթիւպճիի օտան խիւլէֆաներուն կարգը անցաւ. բայց առաջքի պէս արքունի Ղազէթախանան իւր գործքին պիտի պարապի:

Անցեալ անգամին տըպված Լրոյ գըրին մէջը ինչպէս որ յիշվեցաւ, Ասորեստանի գաւառներուն համարակալութիւնները (տէֆթէրտարութիւնները) մէկ մէկ յորմար անձանց յանձնըլված ատենը՝ Կիրիտուկըղին ալ՝ Սալիհ պէյ էֆէնտին ըրքեայի խափուճի պաշիներէն ըլլալուն պատճառաւը մուհասսըլ դըրված էր: Բայց այս անձը՝ երկրորդ րութպէյին նըշանը ունենալուն և ինքն ալ հաւատարիմ գտնըլվելուն համար, վեհափառ Արքայէն երկրորդ րութպէն ու անոր հետ 'ի միասին խօճէկեանութիւն շնորհվելէն 'ի զատ, մուհասսըլութեան անունը վերցըլվելով՝ համարակալութեան պաշտօնն ալ տըրվեցաւ:

Կիրիտու գաւառին միւշիր Մուստաֆա փաշային տըղաքը՝ Վէլի պէյ, Ապտիւլ քէրիմ պէյ, Հասան պէյ, և աներձակը՝ Հալիմ պէյ, և մէօհիւրտարը՝ Մէհէմմէտ րէշիտ էֆէնտին, և իւր տարեէյին գրագիրներէն՝ Րահմի էֆէնտին, և ժուրնալի գրագիր՝ Հասան Թէվֆիգ էֆէնտին, ասոնք հաւատարիմ ու արքայական շնորհումներու արժանաւոր անձինք գտնըլվելնուն համար, Ինքնակալին հրամանաւը՝ Վէլի պէյին գնդապետութիւն (միրալայութիւն), և Ապտիւլ քէրիմ պէյին՝ Հասան պէյին ու Հալիմ պէյին ալ բարապետութիւն (խափուճիպաշիյութիւն), և Րէշիտ էֆէնտիին և Րահմի էֆէնտիին և Թէվֆիգ էֆէնտիին ալ խօճէկեանութիւն շնորհվելով՝ պէտք եղած հրովարտակը և վկայականները խըրկըլվեցան:

Նոյն նախայիշեալ փաշային Մօսեօ գափուրալ անուանով բժիշկը՝ որ գործի համար արքայանիստ քաղաքը եկեր էր, այս անձը մտացի և ուշիմ և աշխատաւոր ըլլալուն համար, բարեխնամ Արքայն՝ սոյն փաշային խափու քէթխիւտասի Նուրի պէյը և յիշեալ բժիշկը իւր դէմը բերել տալով փառաւորեց:

Պալաթիա եօրղանճիներուն մէջ Հէլլէնի տէրութեանը ազգէն Մանուէլ էյօս անունով տպագրիչին տպարանը՝ Յունարէն գիրք մը տպվեր է Իզմիրու մէտրէփօլիտին ուզելովը. և այս գըքին մէջ ուրիշ ազգի դպչելու խօսքեր գըված ըլլալէն 'ի զատ, Օսմանեան տէրութեանը ասկէց յառաջ պատահած եղելութիւնն ալ գըրվեր է:

Ասոր Յունաց Պատրիարքը այս գիրքէն որքան որ տըպվեր է նէ՝ գտնըլված տեղվանքէն զանոնք ժողվելով այրեր է. և այն մէտրէփօլիտը որ իւր օրինաւոր Թագաւորին դէմ յանցանք ընելու յանդգներ է, նոյն պաշտօնէն հանելու և Թէրպիյէն տալու համար ալ՝ յարքունի դուռը իմացուցեր է:

Արդ այս գործքը Ինքնակալին կամացը և իւր հպատակաց վրայ ունեցած խնամոցը և արդարութեան կանոնացը դէմ ըլլալուն համար, այն մէտրէփօլիտը Այնօրօզի մանաստըրը աքսորվելուն, և այն տպագրիչին տպարանն ալ գոցվելուն Թագաւորը հրաման ըրաւ. և Պատրիարքին ալ ցոյց տըված հաւատարմութեանը փոխարէն անգամանդեայ տուփ մը շնորհեց:

Պաստըխըղի դատաւոր (խաւտը) Պէկպազարցի Իպրահիմ էֆէնտիին ժամանակաւոր պաշտօնը որ յառաջիկայ ձէմազիէլ էվվէլի ամսոյն վերջը պիտի լըմնար, հրամանաւ Արքային երեք ամիս ալ վերադիր եղաւ:

Նոյնպէս Բաբիլոնի դատաւոր Իպրահիմ սատէտտին էֆէնտիին ալ՝ նմանապէս մինչև յիշեալ ամսոյն վերջը լըմնալու պաշտօնին վրայ վեց ամիս ալ վերադիր եղաւ: